ցած շորերով, ասաց, որ իր եղբայրը ունէ մի ձեռք հագուստ բոլորովին նոր, որոնց ամենեւին չէ հագել եւ ընծայեց ինձ հագնելու համար:

— Հասօի շորերը իմ վրայ չէին կարող նստել, — պատասխանեցի ես: — Հասօն աւելի հաստ է եւ հասակով կարճ. ես նրանից բարակ եմ եւ երկայն:

— Ես չեմ քնի, այս գիշեր կը նստեմ, բոլորը կը դրստեմ քո հասակի համեմատ:

Նա չափեց իմ հասակը եւ հեռացաւ:

Հաղբակեցի կինը իր տան դերձակն է, նրանց հագուստներն այնպէս էին ձեւուած, որ մեծից փոքրի համար եւ փոքրից մեծի համար փոփոխելու միշտ հնար կար:

Հայերի համար շատ թանկ էր նստում ուխտագնացութիւնը: Մի քանի գիւղի բնակիչները հաւաքւում էին միասին, կազմում էին ամբողջ քարաւան, շատ անգամ բաղկացած հարիւր երկու հարիւր հոգուց: Մի այսքան բազմութիւն դարձեալ չէր կարող առանց վտանգի կատարել իր ճանապարհորդութիւնը. նրանք վարձում էին քրդի ձիաւորներ, որ իրանց պաշտպանեն աւազակների յարձակումներից եւ մարդագլուխ վճարում էին մի նշանակեալ արծաթ: Բայց քիչ էր պատահում, որ նոյնիսկ պահապան քրդերի անյայտ ընկերները յարձակւում էին եւ կողոպտում էին ուխտաւորների քարաւանը: Պահապանները թէեւ ընդդիմութիւն էին գործում, բայց միայն ցոյց տալու համար, թէ իրանք աւազակների հետ առաջուց յարաբերութիւն չունէին:

Ուրբաթ օրը մենք ճանապարհ ընկանք, վաղ-առաւօտեան, առանց քուրդ ձիաւորների պահպանութեան, եւ ոչ խառնոեցանք գիւղացիների հետ: Մի այսպիսի համարձակութիւնը թէեւ յանդգնութիւն էր մեր կողմից, բայց նախ, իմ սնափառութիւնը չէր ներում ապաւինել քրդերի պահպանութեանը, երկրորդ, ծերունի որսորդի անունը, որ այնքան յարգուած էր Հաղբակայ մէջ, բաւական էր նրա ընտանիքը քրդերի յարձակմունքից զերծ պահելու համար:

Քուրդը գիտէ պատոել մեծութիւնը. նա ժողովրդի պետի վրայ նայում է որպէս աստուծոյ ձեռքին, որը հովանաւորում է ժողովրդին : Ծերունի որսորդը Հաղբակայ հայ ժողովրդեան գլուխն էր:

ԼԲ. ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՎԱՆՔԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ աւուր երեկոյեան պահուն մենք հասանք վանք: